

ԿԻԼԻԿՅԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ XII—XIV ԴԱՐԵՐՈՒՄ

ԿԱՏՐԻՆ ՕՏՏԵՆ-ՖՐՈՒ (Ստրասբուրգ)

1097—1098 թվականներին, երբ առաջին խաչակիրները եկան Կիլիկիա, տեսականորեն Բյուզանդիայի վերահսկողության տակ գտնվող այդ տարածաշրջանն այն ժամանակ մասնատված էր փաստորեն անկախ, միմյանց դեմ պատերազմող հայ իշխանների միջև։ XII դարի ընթացքում, մինչև 1150 թ. Ողեսիայի կոմսությունում և Անտիոքի իշխանությունում՝ Առաջին խաչակրաց արշավանքների հետևանքով ստեղծված այդ պետություններում, հաստատված ֆեոդալները հայ իշխանների հետ ունեցել էին առավել կամ նվազ սերտ հարաբերություններ, երբեմն բարեկամական, երբեմն խնամական, ըստ յուրաքանչյուր կողմի ունեցած շահերի կամ պատվախնդրության։ Եվ այդուհանդերձ միայն Խուրինյան իշխան Լևոն Մեծագործի (որը 1193 թ. դարձավ թաղավոր, կրկնվ Լևոն I անունը) կողմից անկախ թագավորության ստեղծումից հետո է, որ հայկական Կիլիկիան սկսում է ինչ-որ դեր խաղալ Արևելյան և Արևմտաքրի միջև տնտեսական հարաբերություններում¹,

Գտնվելով Փոքր Ասիայի հարավային եզրին, Կիլիկիայի հայկական թագավորությունը, որն արևմտյան հեղինակներն անվանում էին Փոքր Հայք, պաշտպանված, եթե չասենք Փոքրասիական թերակղզու մնացյալ մասից մեկուսացած, տարածք էր, հյուսիսում շրջապատված Տավրոսի լեռներով, իսկ հարավ-արևելքում՝ Ասորիքից անջատված Ամանոսի լեռնաշղթայով։ Այդ լեռնադանդիտներն անցանկի են լեռնանցքների՝ անցման ամրացված կետերի միջոցով, որոնք վերահսկվել են հեշտ է։ Առևտրական ցամաքային ուղիներն օգտվում էին ղրանցից՝ դնալու համար դեպի Իկոնիա, իսկ այնուհետև՝ Կոստանդնուպոլիս, կամ դեպի Սերաստիա և ավելի հեռու՝ Թավրիզ և կենտրոնական Ասիա։ Տեղ-տեղ ավազուտ, տեղ-տեղ ապառաժուտ ծովեզրերը նավերին ընձևոում էին հանգրվանելու ամեն մի հնարավորություն Կարամելլայի ծոցի նման ծովածոցերում կամ Կոոիկոսի, Կանդելորի, Պորտուս Պալլորումի նման նավահանգիստներում՝ Պիոմոնտի դետաքերանի մոտ, և հատկապես Այաոում (հայկական աղբյուրներում՝ Այաս, իտալացիների համար՝ Laiazzo, այժմ՝ Yumurtalik)՝ Ալեքսանդրիայի ծոցում²։

¹ Թագավորության պատմության վերաբերյալ տե՛ս L. Alishan. Sisouan ou l'Arménie-Cilicie, trad. française. Venise, 1899; S. Der-Nersessian. „The kingdom of Cilician Armenia“ գլուխը (K. M. Setton-ի հրատ.)։ A history of the Crusades. II, Philadelphia, 1962; The Cilician Kingdom of Armenia, ed. T. S. R. Boase. Edimbourg—Londres, 1978; G. Dedéyan (ed.). Histoire des Arméniens, Toulouse, 1982. G. Dedéyan. Les Pouvoirs arméniens dans le Proche-Orient méditerranéen, 1058—1144. Lille, 1980 (հրատարակվելիք գիտություն)։ C. Mutaflan. Le Royaume arménien de Cilicie, XII—XIVe siècle. Paris, 1993.

² Տարածաշրջանի պատմական աշխարհագրության վերաբերյալ տե՛ս L. Alishan. Sisouan. H. Hellenkemper. Burgen der Kreuzritterzeit in der Grafschaft Edessa und im Königreich Kleinarmenien. Bonn, 1976; C. Mutaflan. La Cilicie au carrefour des Empires Paris, 1988; F. Hild & H. Hellenkemper. Kilikien und Isaurien. Vienne, 1990 (Tabula Imperii Byzantini, 5).

Տնտեսական-ֆառաֆական ենթատեսակ. սկզբնական շրջան. — Տարածաշրջանի քաղաքական պատկերն ամբողջությամբ տակնուվրա եղավ XII դարի վերջին մասնագրականների հարձակումների հետևանքով: Սալահ ադ-Դինը, 1187 թ. հուլիսին Հատտինում ֆրանկների դեմ տարած ջախջախիչ հաղթանակից հետո, նորից, համարյա ամբողջությամբ, դրավեց Երուսաղեմի թագավորությունը և հատկապես Սուրբ Քաղաքը, և միայն մեծ դժվարությամբ է, որ լատինները 1191 թ. վերստին նվաճեցին Ակրան, ինչպես նաև ծովագրի մի նեղ շերտ, այդպիսով վերստեղծելով մի տեսակ թագավորություն առանց Երուսաղեմի, որը XIII դարի արշալույսին դեռևս թույլ էր: Սիևնույն ժամանակ, Ռիչարդ Առյուծասիրտը 1191 թ. բյուզանդացիներից խլեց խաչակիրների պարենամատակարարման համար կարևոր նշանակություն ունեցող Կիպրոս կղզին, որը նախապես անհաջող գործարքով վաճառել էր Տաճարականներին, իսկ 1192 թ. վերադարձրեց այն Գի դը Լուսինյանին՝ Երուսաղեմի գահազուրկ եղած թագավորին, որը պարտություն էր կրել Հատտինում: Առևտրի իրականացման պայմանները տարածաշրջանում, մասնագրականների առաջնադասման հետ, փոխվեցին. արևմտյան առևտրական ձեռնարկումների առջև ավելի ազատորեն բացվեցին այնպիսի նոր տարածքներ, ինչպիսիք էին Կիպրոսը և Կիլիկիայի հայկական թագավորությունը, որի թագավորը գիտակցում էր այն առավելությունները, որ կարող էին ընձեռել լատինների հետ ունեցած սերտ հարաբերությունները: Իտալացի վաճառականները, որոնք մինչ այդ աշխուժացրել էին առևտուրը Միջերկրական ծովի արևելյան ավազանում, առաջինը եղան, որ նոր թագավորությունում օգտվեցին առևտրական արտոնություններից: 1201 թ. Լեոն 1-ը ջառվացիներին և վենետիկցիներին շնորհեց առաջին արտոնագրերը: Դա վաճառականների համար ընդունելության կառուցվածքների ստեղծումն էր՝ Սիսում, Տարսուսում և Մամեստիայում (Մամեստիայում միայն վենետիկցիների համար) հողակտորների հատկացումը՝ տներ, եկեղեցի և ֆոնդուկ (պանդոկ, հյուրանոց—ժանոթ. թարգմանչի) կառուցելու համար, ազատումը հարկերից, նավաբեկության դեպքում ունեցվածքի և անձի պաշտպանությունը, համայնքի անդամների միջև կոնֆլիկտի դեպքում իրավական անկախությունը: Մինչդեռ Ասորիք—Պաղեստինից եկող վենետիկցիները ցամաքային ճանապարհով թագավորություն մտնելու համար պետք է վճարեին, ինչպես և ամեն մի քրիստոնյա, Պորտեղայի մաքսատանը: Սիս, Տարսուս և Մամեստիա քաղաքների հիշատակությունը, որոնցից և ոչ մեկը մեծ ծովային նավահանգիստ չէր, ցույց է տալիս, որ խոսքը վերաբերում էր վաճառականներին դեպի նշված վայրերը գրավելուն, և որ փոխանակումները մինչ այդ պետք է կատարված լինեին հիմնականում ցամաքային ուղիով, որն անցնում էր Կիլիկիայի դարբասներով և Ասորիքի Դրունք Ասորոցով: Դեռևս չկար որևէ մեծ նավահանգիստ, որը ներմուծումն ու արտահանումը դարձրած լիներ իր մենաշնորհը, ուր հիմնականում իտալացիների ձեռքում լինեին այդ գործունեությունները:

Կիլիկյան առևտրի ծաղկման գագաթնակետը. — XIII դարի երկրորդ կեսից սկսած իրադրությունը փոխվում է: Կիլիկիան օգտվում է մի շարք նպաս-

8 Ջենովացիների արտոնությունների մասին տե՛ս V. Langlois. *Tresor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Rois arméniens*. Venise, 1863, pp. 105—108 = *Libellum I, Historiae Patriae Monumenta*. HPM VII, Turin, 1834, coll. 468 et suiv. *Վենետիկցիների արտոնությունների մասին տե՛ս* V. Langlois. *Op. cit.* pp. 109—112. T. L. F. Tafel—G. M. Thomas. *Urkunden zur älteren Handels- und Staatsgeschichte der Republik Venedig mit besonderer Beziehungen auf Byzanz und die Levante*, 3 vol., Vienne, 1856—1857, réimpr. Amsterdam 1964 (abr. T. T.), pp. 373—381 = *L'Arménie-Veneto*, Venise, 1893, pp. 1—4. *Նշված հրովարտականների բովանդակության վերաբերյալ տե՛ս Ա. Բողոյանի աշխատանքը* (*Le cadre juridique du commerce de la Cilicie arménienne, տե՛ս Arménie entre Orient et Occident*, Paris, 1956, p. 128—133):

տավոր գործունեւորից, որոնք նոր խթան հանդիսացան առևտրի զարգացման հասարակ Օռնդուլների կողմից խաղաղութիւն հաստատումը, սկզբնական շրջանում, ավելի ասվածադ դարձրեց բարավանային ճանապարհները, իսկ հանդերցե արեւելյան պարենաւորութեան ավելի լավ մատակարարմանը և հնարավորութիւն տվեց, որ արեւմտյան վաճառականներն իրենք խրախուս առաջանալ ղեկի ասիական մայրցամաքի խորքը՝ սինչև շիսաստան, և հաստատվեն Բաբիլոնում. Սարկո Պոլոյի ուղևորութիւնները դրա ապացույցն են: Իտիլի ալգ, Հելիում 1-ի վարած՝ սոսղոյների հետ մերձեւալու քաղաքականութիւնը հավանաբար ունեցավ մի ազդեցութիւն, որի շարքը որոշել հնարավոր չէ մեր ունեցած դիտելիքների ներկա վիճակում: Սիւսուլն ժամանակ, Սգիպտոսում Մամուրիան դիւստիայի հաստատումը և այնպիսի սուլթանների ռազմական արշավանքները, իսլամիսիք են Բալթարսը և Վալաունը, ինչպես նաև նրանց կողմից Ասորիք-Պաղեստինի քրիստոնեական տարածքների աստիճանական վերանվաճումը (Անտիոքինը՝ 1268-ին, Տրիպոլիինը՝ 1289-ին), վտանգավոր էին դարձնում առևտրի իրականացումը. այդպիսով, վաճառականները ստիպված եղան իրենց գործունեւութիւնը հետգհետե տեղափոխել ղեկի Իսլամիս, և հատկապես Ֆամագուստայի նավահանգիստը, որը վերելք էր ապրում, և ավելի ինտենսիվ դարձնել իրենց ներկայութիւնը Կիլիկիայում՝ Այասում, որը հիշատակվում է, միաժամանակ, արեւմտյան վաճառականներին շնորհված արտոնութիւնների նորացման կապակցութեամբ և նոտարի կողմից վավերացված պայմանագրերում՝ 1260-ական թթ. սկսած: Պապական իշխանութիւն կողմից devetum-ի, այսինքն՝ անհավատների հետ ամեն տեսակ առևտրի արգելման գործադրումը, որը 1291-ին Ակրայի անկման հետեանքն էր, արեւմտաքրիստոնեական համար անկարելի դարձրեց Ասորիք-Պաղեստինյան ծովագրին և Սգիպտոսում առևտրով զբաղվելը, որտեղից վաճառականները ձեռք էին բերում համեմունքները և արեւելյան ապրանքեղանք: Ուոաի պետք եղավ գանել այլընտրանքային լուծումներ, քանի որ գոյութիւն ունեցող մարքանենցութիւնը չէր բավարարում Արեւմտքի մատակարարման պահանջները: Այդ ժամանակ որպես միջնորդներ օգտագործեցին այն վաճառականներին, ովքեր ենթակա չէին Հոռոն հնազանդվելուն, որպիսիք էին արեւելյան քրիստոնեականները: Այս միջոցին է նաև, որ Ֆամագուստան և Այասը դառնում են այդ տարածաշրջանում առևտրի հանգուցային կետերը և Խալիպիզով ղեկի Պարսից ծոց տանող՝ որ առևտրական ճանապարհի հենակետերը:

Այաս.—Հայկական Կիլիկիայի անտեսական գործունեւութիւնը կենտրոնանում է, ինչպես ասացինք, Այաս նավահանգիստում, որն արագորեն իրեն դրսևորում է որպես երկրի տնտեսական կյանքն աշխուժացնող սիրտը, քանի որ, երբ 1337 թ. նավահանգիստն ընկնում է մամուլքների ձեռքը, հայկական թագավորութիւնն անհետանում է արեւմտաքրիստոնեական առևտրի ուղևորութիւնների շարքից, թեև դադարում է գոյութիւն ունենալուց միայն 1375-ին:

Ալեքսանդրիտի ծոցում գտնվող այդ նավահանգիստը տեղադրված է խորիսխ ձգելու անվտանգ տեղում: Այն ժամանակ, երբ Մարկո Պոլոն էր անցնում ալգտեղով, քաղաքը բարգավաճում էր: Այն որպես ուղևորութիւն նպատակակետ առաջին անգամ հանդես է գալիս 1257-ին ջենովական մի վավե-

⁴ D. Jacoby. „The Rise of a New Emporium in the Eastern Mediterranean: Famagusta in the late thirteenth century“, *Meletai kai Upomnemaia I*, Nicosie, 1984, p. 145—179 (repris dans: *Studies on the Crusader States and on Venetian Expansion*, Londres, 1989).

⁵ Marco Polo. *Le deviselement du monde*, version française de L. Hambis. I, Paris, 1980, p. 68.

րագրում⁶, սակայն մինչ այդ այնտեղով անցել էր Գիյոմ դը Ռյուբրուքը⁷. 1261-ին այն հիշատակվում է վենետիկցիներին շնորհված արտոնագրում⁸: Այսօր շատ քիչ բան է մնացել երբեմնի այնքան աշխույժ նավահանգստից: Այնտեղ կային երկու դղյակ, մի քանի կաթոլիկական եկեղեցիներ, մասնավորապես ջենովացիների Ս. Լավրենտիոս և վենետիկցիների Ս. Մարկոս եկեղեցիները: Կիլիկիայի տնտեսական վերելքը պատճառ դարձավ Այասի դեմ բազմաթիվ մամուլքյան ասպատակությունների. դրանք վկայված են 1266, 1275, 1281, 1283, 1298, 1305, 1320 թթ. և 1322-ին, երբ վտանգը ստիպում է բնակիչների մի մասին փախչել դեպի Ֆամագուստա: Դավադարին ներկայացնում է Քարիմ ադ-Դինի ծրագրերը, որոնց նպատակն էր վերականգնել Լաոդիկեայի առևտուրն այնպես, որ թուլացնի Այասը, սակայն նա ձախողում կրեց⁹: 1335-ին բնակիչները նորից են փախչում, և 1337-ին Այասն ընկնում է: Քաղաքը վերստին գրավելու փորձը, կատարված Կիպրոսի թագավոր Պետրոս I Լուսինյանի կողմից, ձախողվում է 1367-ին: Կոստանթնուպոլիսի վերջինս վերահսկողության տակ էր անցել, իր վրա է վերցնում, սակայն առանց նրան հավասարվելու, Այասի գործունեության մի մասը. այդ գործունեության գնահատականը տալու համար պակասում են վավերագրերը, և հայկական Կիլիկիան անհետանում է արևմուտքցիների երթուղիներից¹⁰:

Առևտրական իրողությունները. աղբյուրները.— Մտովի վերականգնել հայկական Կիլիկիայի առևտրի պատկերը միջնադարում՝ նշանակում է պատկերացում կազմել Այասով անցնող առևտրական փոխադրումների մասին: Վավերագրերը համեմատաբար առատ են 1260-ից սկսած: Հայ թագավորների կողմից շնորհված արտոնագրերի կողքին, որոնք սահմանում են թագավորությունում ապրանքափոխանակության և վաճառականների հաստատման իրավական շրջանակները, կարելի է գտնել մի շարք ջենովական և վենետիկյան նոտարական վավերագրեր (դրանք են միակ պահպանվածները), որոնցում հիշատակվում են Կիլիկիայում և կամ նրա դիվանագիտության մեջ կրեված պայմանագրերը. դժբախտաբար, դրանք անհավասարաչափ են բաշխված այդ ժամանակաշրջանի վրա. վավերագրերի առաջին խումբը՝ բաղկացած 200 փաստաթղթից և շարադրված Այասում 1274, 1277 և 1279 թթ.,

⁶ R. S. Lopez. „Nuove luci sugli Italiani in Estremo Oriente prima di Colombo“. Studi Colombiani, III, Genes, 1950, p. 350, repris dans: Su e giù per la storia di Genova, Genes, 1975 (Collana storica di fonti e studi diretta da G. Pistorino, 20).

⁷ Guillaume de Rubrouck. Voyage dans l'Empire mongol, trad. C. et R. Kappler. Paris, 1935, pp. 242—243.

⁸ Alishan. Armeno-Veneto, pp. 7—11.

⁹ Հղում է ըստ S. Labib. l'andelsgeschichte Ägyptens im Spätmittelalter (1171—1517), Vierteljahrsschrift für Social und Wirtschaftsgeschichte, beihft 46. Wiesbaden, 1965, S. 67, n. 8.

¹⁰ Այասի վերաբերյալ տե՛ս Alishan. Sissojan, pp. 426—474. H. Hellenkemper. Burgen der Kreuzritterzeit, pp. 154—164. Hild & Hellenkemper. Op. cit. pp. 160—164. Այասի տնտեսական կյանքի մասին տե՛ս W. Heyd. Histoire du commerce du Levant au Moyen Age, 2 vol., Leipzig, 1885—1886, réimpr. Amsterdam, 1967. P. Z. Bedoukian. Coinage of Cilician Armenia. New York, 1962. C. Otten-Froux. „Ayas dans le dernier tiers du XIIe siècle d'après les notaires génois“, The Medieval Levant. Studies in memory of Elyahu Ashtor, ed. B. Z. Kedar et A. L. Udovitch. Asian and African Studies, 22, nov. 1988, pp. 147—171. P. Racine. „Ayas dans la seconde moitié du XIIIe siècle“, Rivista di Bizantinistica 2, 1992, pp. 173—206. C. Otten-Froux. ch. „Les échanges commerciaux“, dans C. Mutafian. Le Royaume Arménien de Cilicie... Op. cit., pp. 119—126. C. Otten-Froux. „Les relations économiques entre Chypre et le Royaume arménien de Cilicie d'après les actes notariés (1270—1320)“, dans Byzance et l'Arménie, pp. 157—179 (անտիպ):

դալիս է ջննովացի Ֆեդերիկո դի Պիացցալունդա և Պիետրո դի Բարզոնո¹¹ նոտարներից, երկրորդ խմբում հաշվվում են 1000 վավերագիր՝ կազմված Ֆամագոստայում 1296 և 1310 թթ. միջև կամբերոտո դի Սամբուչետոյի և Ջովաննի դի Ռոկուչի կողմից, որոնք երկուսն էլ ջննովացի նոտարիսներ են¹², և, վերջապես, մոտ 50 փաստաթուղթ, կազմված Ալեսսանդրո 1315-ից 1318 թթ., մեզ է հասել վենետիկյան նոտար Ֆելիչե դե Մերիսից¹³։ Դրանց թվին կարելի է ավելացնել ևս մի քանի վավերագրեր, որոնք այլ նոտարներից են, իսկապես կամ ոչ իտալացի։ Բացի այդ, Ալեսսանդրո հիշատակվում է այնպիսի հաշվեմատյաններում, ինչպիսին է Ֆլորենցիացի Ֆրանչեսկո Բուդուչչի Պեդրոտաիի՝ Բարդինների մեծ ընկերության հանձնակատարի ստացանք, որը XIV դ. սկզբին *Pratica della Mercatura*-ում գրանցում էր տարբեր ազգությունների վաճառականների մոտած հարկերը և տեղական շուկայում առկա աղբյուրաբանականները¹⁴։ Նույն կարգի տեղեկությունների նաև հասկանալի է, որ մեզ է հասել 1278 թվականով պիզացի, անանուն վաճառականի մատյանում, որը թվագրված է 1278 թվականով¹⁵։

Հարկ է նշել, որ առևտրական գործունեությանը վերաբերող աղբյուրներն իտալական են և ոչ միատեսակ։ Հետևաբար, հարկ կլինի Լեզուկացություններ անկիս զգուշություն ցուցաբերել։

Առևտրափոխանի արտոնությունները.—Արևմտյան վաճառականների կտրուկվածներ որոշվում էր նրանց ձեռք բերած արտոնադրերով։ Սենթ ալեսանդրոյի շենք անդրադառնալով նրանց իրավական բովանդակությանը (տե՛ս Ա. Բուդուչչիի հոդվածը)՝ ոահմանափակվելով պարզ ժամանակագրական հիշեցումով։ Ջովաննիները, 1201-ին իրենց շնորհված առաջին արտոնագրից հետո, շնորհադրեր ստացան 1215 և 1288 թթ.¹⁶։ Ապրանքներ ներմուծելիս, արտահանելիս, դնելիս և վաճառելիս նրանք օգտվում էին հարկերից ազատված լինելու իրավունքից։ Նրանք հաշտություն մի հաստատվել էին Ալեսսանդրո, որ անեին իրենց հյուպատոսը։ Վենետիկցիները նույնպես ազատված էին

¹¹ I. Balleito. Notai genovesi in Oltremare. Atti rogati a L'azaro da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargone (1277, 1279) Gênes, 1559, որը փոխարինում է C. Desimoni-ի հին և թերի հրատարակությանը՝ «Actes passés en 1271. 1274 et 1279 à Ayas et à Beyrouth par devant des notaires génois», Archives de L'Orient Latin, I, Paris, 1891, pp. 434—534.

¹² C. Desimoni-ի հին, թերի հրատարակությունը՝ «Actes passés à Famagouste de 1299 a 1301 par devant le notaire génois Lamberto di Sambuceto», Archives de l'Orient Latin, II, Paris, 1881, 2e partie, pp. 3—120 et Revue de l'Orient Latin, I, 1893, pp. 58—108, մասամբ վերանայվել է լրացվել է M. Ballard-ի կողմից՝ Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (11 ottobre 1296—23 giugno 1299), Gênes, 1983; V. Polonio. Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (3 luglio 1300—3 agosto 1301). Gênes, 1982; R. Pavoni. Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (gennaio-agosto 1302), Gênes, 1987; M. Ballard. Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (31 marzo—12 luglio 1307); Giovanni de Rocha (3 agosto 1308—14 marzo 1310), Gênes, 1984.

¹³ A. Bondi Sebellico, Felice de Merlis. Prete e notaio in Venezia ed Ayas, 1315—1348, 2 voll., Venise, 1973—1978.

¹⁴ F. Balducci Pegolotti. Pratica della mercatura, ed. A. Evans, Cambridge Mass., 1936.

¹⁵ R. Lopez—O. Alraïdi. Il più antico manuale italiano di pratica della mercatura.—Miscellanea di Studi Storici, II, Gênes, 1953, pp. 99—133.

¹⁶ Privilège de 1215: Langlois. Cartulaire, pp. 126—127=Libri Iurum I, coll. 574 et sq.; privilège de 1288: ID., Cartulaire, pp. 154—162 (=Libri Iurum II, coll. 183 sq.).

հարկերից՝ 1201 թ. իրենց առաջին արտոնագիրն ստանալուց հետո. նրանց շնորհագրեր են տրվել 1245, 1261, 1271, 1307, 1321, 1333 թթ.¹⁷ 1271-ին նրանք համայնքը գլխավորող պալլ ունենալու իրավունք են ձեռք բերել: 1331 թ. սիցիլիացիներին շնորհված արտոնագրերը, որ մի գեղեցիկ երկրագլխան փաստաթուղթ է՝ հայերեն և լատիներեն, դեռևս պահպանվում է¹⁸. սուրբերի նվազեցմանը վերաբերող երկու հայերեն փաստաթուղթ, համապատասխանաբար 1314 և 1321 թթ., հասցեագրված են Մոնպելյեի մարզկանց¹⁹, կատալոնացիներին տրված արտոնագրերից ոչ մեկը չի պահպանվել, թեև մոտ 1293 թ. նրանք պիտի ստացած լինեին նման մի փաստաթուղթ²⁰, Մինչդեռ ներմուծման և արտահանման սովորական իրավունքները կազմում էին ապրանքների արժեքի 4 տոկոսը, Պեգոլոտտին հաստատում է, որ ջենովացիները, վենետիկցիները և սիցիլիացիները ոչ մի մաքս չեն մուծել թագավորություն ելումուտ անելիս, ինչպես և Բարդիների ֆլորենտիական ընկերությունը, որի համար նա անձամբ է ձեռք բերել այդ արտոնությունը 1335 թ. հունվարի 10-ին: Պիզացիները, կատալոնացիները, պրովանսացիները և ֆլորենտիական մյուս մեծ՝ Պերուցիների ընկերությունը վճարել են 2 տոկոս²¹:

Ապրանքառեսակները.— Առևտրական պայմանագրերում, ինչպիսիք են պատվերները, ծովային դրամափոխությունը, կամ նավավարձման պայմանագրերը, հիշատակվում են այն ապրանքները, որոնք փոխադրման կամ կապիտալ ներդրումների առարկա են հանդիսացել: Ակրայի անկմանը նախորդած ժամանակաշրջանում արտահանվող ապրանքներից, ըստ Այասում կազմված փաստաթղթերի, կարելի է նշել փայտը, երկաթը, անագը, որոնք փոխադրվում էին դեպի Եգիպտոս հատկապես պիզացի վաճառականների կողմից՝ շնայած եկեղեցու արգելքին: Փայտը և երկաթը փոխադրվում էին նաև դեպի Ասորիք-Պաղեստինյան ծովեզերքը, վուշն ու գարին՝ գեպի Անտիոք: Գեպի Արևմուտք, հատկապես Ջենովա, արտահանում էին բամբակ, զանազան համեմունքներ (պղպեղ, կոճապղպեղ, սանդալի փայտ, որդանփայտ), ոսկի, մարգարիտներ, մետաքս և շիբ: Արևմուտքից ներմուծվում էին թանկարժեք մահուդեղեն, կտավեղեն, ամեն տեսակի գործվածքներ, որոնք կամ վաճառվում էին տեղում, կամ նախատեսված էին Սեբաստիա կամ Իկոնիս փոխադրվելու համար: Այաս է ներմուծվում նաև ցորեն: Տեղում փոխանակվում են օճառ, գործվածքներ: Այասում վախճանված ջենովացի մի վաճառականի գուլթի ցուցակում կարելի է գտնել ինդիգո, կոշտ աստառացու կտոր, եզան կաշի, եզան եղջյուրներ: Երկու ստրուկներ փոխանակվել են տեղում, մի կին՝ Ֆաթիմա անունով և մի տղամարդ՝ Գիրարդուս անունով: Ակրայի կղզուտից և քրիստոնյաների՝ Կիպրոս հռաճալուց հետո փոխանակումների բնույթը փոխվում է: Այասը սերտորեն կապվում է Ֆամագուստայի հետ, երկու վաճառքները կազմում են մեկ առևտրական տարածք: Երկու քաղաքներն էլ ծառայում են որպես ապրանքապահեստներ: Այասից է գալիս կիլիկյան դաշ-

¹⁷ *Privilege de 1245: Langlois. Cartulaire*, pp. 143—145. L. Alishan. *L'Armeno-Veneto*, pp. 4—7; *privilege de 1261: ibidem*, pp. 7—10; *privilege de 1271: Langlois. Cartulaire*, pp. 151—153—T. T. 3, pp. 115—118. Alishan. *L'Armeno-Veneto*, pp. 10—12; *privilege de 1307: Langlois. Cartulaire*, pp. 166—169; L. de Mas Latrie. *Histoire de l'île de Chypre sous le regne des princes de la maison de Lusignan*, III, Paris, 1861, pp. 687—690. G. Thomas. *Diplomatarium Venetico-Levanticum*, I, Venise, 1880, pp. 72—73; *privilege de 1321. Langlois. Cartulaire*, pp. 182—184; Thomas. *Diplomatarium*, I, pp. 178—181; *privilege de 1333: Langlois. Cartulaire*, pp. 193—194; Thomas. *Diplomatarium*, I, pp. 237—238.

¹⁸ *Langlois. Op. cit.*, pp. 186—190.

¹⁹ Նույն տեղում, էջ 178—179 և 185—186:

²⁰ Նույն տեղում, էջ 163:

²¹ Pegolotti. *Op. cit.*, p. 60.

տավայրում աճեցվող բամբակը. այն կամ արտահանվում է ուղիղ Արևմուտք, կամ փոխադրվում է Ֆամագուստա, ուր պահեստավորվում է Արևմուտք ուղարկվելուց առաջ: Այսպես Ֆամագուստայից ստանում է սննդամթերք՝ ցորեն (որը հաճախ բերվում է Արևմուտքից) և այլ հացազդիներ, նուշ, ձկն, պղնձ, ձուկ, պանիր, ինչպես նաև մետաղներ, ինչպիսին է պղինձը, և կամ նորից մահուղեղեն և օճառ: Սրանք եւս փոխառակվող հիմնական ապրանքատեսակները, որոնք Լեռնան են զայիս նոտարական վավերացրելու: Մարկո Պոլոն, իր հերթին, նշում է համեմունքները, մահուղեղենը և այլ թանկարժեք ապրանքատեսակներ, ինչպես նաև տեղում արտադրվող բամբակը²²:

Պիղոսի վաճառականի մատյանը մանրամասնում է Այասի շուկայում տոկոս առաքելքատեսակները. այստեղ կարելի է գտնել մետաքս, ամեն տեսակի համեմունքներ (պղպուղ, մետակ, սանդալ, հիլ, քաֆուր, հեղեղական պղպուղ, մշկընկույղ, կոճապղպեղ, որդանփայտ, կարմրախեղ, դարչին), ինդիգո, բամբակ, ամոնիակ, այնպիսի գործվածքներ, ինչպիսիք են կոշտ աստառացուն և կամլուրը, մարգարիտներ²³, Պեդոլոտտին հաստատում է այս ցուցակը՝ հիշատակելով բաղամթիվ համեմունքներ, բամբակ, երկաթ, պղինձ, անաղ, մետաքս, մարդարիտներ, մարջան, օճառ, բուրդ, առաքատացու կտավ, կանվա, քրքում, ձկն, հացահատիկ²⁴. դրանք թե՛ տեղական արտադրանքներ են և թե՛ Արևելքից կամ Արևմուտքից եկող ապրանքներ, ընդ որում հիմնական արտահանվող ապրանքատեսակները մնում են համեմունքները, բամբակը, մետաքսը, իսկ ներմուծվողները՝ հացահատիկը և մահուղեղենը:

Առևտրի ուղղությունները.—Երբ ուսումնասիրում ենք առևտրի ուղղությունները, զործուն փոխադրումների ծավալը, պարզվում է, որ Եգիպտոսի ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները զույլություն են ունեցել միայն 1274-ին, սակայն այդ ուղղությունը հիշատակվում է 30 անգամ. դրան հետևում են Ջենովան և Ասորիքը, որոնք հիշատակվում են 10 անգամ, և Կիպրոսը, որ հիշատակվում է 7 անգամ: Եթե Ջենովայի և Ասորիքի հիշատակումները հալսասար թվով են, ապա Ջենովայի համար կատարված ներգրումները առանց անդամ գերազանցում են Ասորիքի համար արվածներին և քիչ են չիջում Եգիպտոսի համար արվածներին: Նշվում են նաև դեպի Սեբաստիա արված առաքումներ, և միայն մեկը՝ դեպի Բարսելոնա: 1277-ին Եգիպտոսն անհետանում է մեր վաճառականների ժամանման վայրերի ցուցակից, Ջենովան հիշվում է ընդամենը մեկ անգամ՝ առանց ներդրումների մասին հիշատակության, Սեբաստիան դառնում է ժամանման գլխավոր վայրը: 1279 թ. Ջենովան առաջին տեղն է զբաղում՝ 12 հիշատակությամբ, նրան հետևում է Ասորիքը՝ 8 հիշատակությամբ և Իկոնիան՝ 2 վկայակոչմամբ: Միայն Եգիպտոսը ի հայտ չի գալիս: Ասորիքը զբաղում է ավելի կարևոր տեղ: Սակայն վավերագրերը չեն ծածկում ամբողջ տարին, քանի որ որոշ ևրթուղիներ սկզբնապես են, հետևաբար հնարավոր չէ որոշակի եզրակացություն անել առևտրի ուղղություններից Եգիպտոսի անհետացման մասին, գոնե նախքան Ակրայի անկումը: 1291-ից հետո արևմուտքից հրաժարվում են Եգիպտոսի կամ Ասորիքի հետ ուղղակի առևտրից և սկսում շրջանցիկ ճանապարհներով (մասնավորապես Պարսից ծոցից Թավրիզի վրայով անցնող քարավանային ուղիներով) հայթայթել այն արևելյան ապրանքատեսակները, որոնց կարիքն իրենք ունենին: Նոտարական վավերագրերը մատնանշում են, որ աշխույժ առևտուր է ծավալվել հիմնական առևտրական գործընկերոջ՝ Ֆամագուստայի հետ: Պեդոլոտտիի շնորհիվ կարող ենք տեսնել, թե ուրիշ որ քաղաքների հետ էր կապեր պահպանում Այասը, քանի որ նա

²² Marco Polo. Op. cit., I, p. 68.

²³ Lopez-Airaldi. Art. cit., pp. 125—126.

²⁴ Pegolotti. Op. cit., p. 59.

այդ հավահանգստին վերաբերող գլխում նշում է շափերի ու կշիռների համարժեքները Վենետիկի, Ջենովայի, Նիմի և Մոնպելիի, Մայորկայի, Սևիլիայի, Բրյուզգեի, Լոնդոնի, Ապուլիայի, Մեսսինայի, Սեբաստիայի համարժեք: Այստեղ, իհարկե, գտնում ենք XIV դարի առաջին քուռորդի խոշոր տնտեսական կենտրոնները կամ քաղաքներ, որոնք արտոնագրեր են ստացել հայ թագավորներից:

Առևտրական գործակալները.—Ինչ վերաբերում է առևտրական գործակալներին, ապա նրանցից ամենագործունյաները եղել են լիզուրիացիները, ինչպես և պետք էր սպասել, քանի որ փաստաթղթերի մեծ մասի սկզբնաղբյուրը շենովացի նոտարներն են: Սակայն պիզացիները ևս հաճախ ներկա են այստեղ՝ 1274, 1277, 1279 թթ.: Ուստի, ինչպես Ակրայի անկումից առաջ, այնպես էլ հետո, ամենախոշոր գործարքները կնքվել են ֆլորենտիական կամ պաշենցայական խոշորագույն առևտրական ընկերությունների, վաճառականական արհեստակրատիային պատկանող մեծ ընտանիքները ներկայացնող շենովացիների կամ վենետիկցիների կողմից. սակայն մանր առևտրականներից շատերը ևս աշխուժացրել են տեղական առևտուրը՝ երկու քաղաքների պարենավորումն ապահովելով կամ շուկաներին սննդամթերք մատակարարելով: Վենետիկցիները քիչ են ներկայացված 1274, 1277, 1279 թթ. փաստաթղթերում (6 անուն՝ 684 անձից), ինչպես նաև կամբերտո դի Սամբուչետոյի վավերագրերում: Մինչդեռ հայտնի է, որ վենետիկցիները պալլունեին 1274 և 1279 թթ., ինչը որոշակի ստվարություն ունեցող համայնքի նշան էր²⁵, Մյուս կողմից, վենետիկը բացել է մի առևտրական ուղի, որը, 1294-ին սկսած, հասնում էր մինչև Ալաս. նույն թիանավերը հաճախ հասնում էին նաև մինչև Կիպրոս՝ մինչև 1336 թ., երբ Հայաստանը հիշատակվում է վերջին անգամ: Այս գծի վրա տարեկան կարող էին լինել վեցից ութ թիանավ, Դրանք, եթե հասնում էին մինչև Կիպրոս, այստեղից տանում էին գլխավորապես ըամբակ, մետաքս և շաքար²⁷, Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է պաշտոնական առևտրին, որը ոչնչով չի գերազանցում մասնավորին. վերջինս, դժբախտաբար, վավերագրելով շատ ավելի քիչ է ներկայացված: Ֆելիչե դե Մերլիսի 1316—1318 թթ. փաստաթղթերը որոշ չափով լրացնում են բացը՝ ցույց տալով, որ Ալասում հաստատված են եղել վենետիկցի վաճառականներ, որոնք գործնական կապերի մեջ են եղել Ֆամագուստայի (վարկային, ծովային փոխառության պայմանագրեր, անդորրագրեր) կամ Կրետեի հետ²⁸,

Առևտուր Ասիայի խորհի հետ.—Եթե տեղական կամ Արևմուտքի հետ կատարված առևտուրը կարելի է պատկերացնել կոնկրետ կերպով, ապա ասիական մայրցամաքի խորքի հետ առևտրական կապերը, ընդհանրապես, վկայված են միայն հիշատակություններով, առանց թվական տվյալների: Անհնար է, օրինակ, որոշել հայ վաճառականների մասնակցության բաժինը, և կամ մահմեդական վաճառականներինը, քանի որ արևմտյան վավերագրերում նրանք բոլորովին ի հայտ չեն գալիս: 1268-ին, շենովացի ծովակալ Լուկետո դե Գրիմալդին մի թիանավ է կողոպտում բաց ծովում՝ Կոռիկոսի մոտակայքում. տուժում են տարբեր ազգությունների վաճառականներ. նրանց կրած վնասի հատուցման հետ կապված համաձայնությունների կնքման կապակցությամբ հիշատակվում են նրանց և նրանց գործընկերների անունները:

²⁵ Ibidem, pp. 61—63.

²⁶ G. M. Thomas. Die ältesten Verordnungen der Venezianer für auswärtige Angelegenheiten.—Abhandlungen der Königlich bayerischen Akademie der Wissenschaften, I. Klasse, Bd. 13, I Abteilung. Munich, 1873, S. 32, 11.

²⁷ D. Stöckly. Le système de l'incante des galées du marché a Venise (fin XIIIe—milieu XVe siècle). Leiden, 1905.

²⁸ Boadi Sebellico, Felice de Marlis. Op. cit.

րը, խոսքը վերաբերում է սի շարք արաբ վաճառականների (մի քանիսը Դամասկոսից են), որոնք ապրում են Ակրայում կամ Տյուրոսում, մոնղոլական հպատակների և հայ վաճառականների. 1271 թ. նրանք ստանում են 14.900 շինովական լիվո հումար²⁹։ Մյուս կողմից, 1285 թ. հունիսի 7-ի պայմանագրերը, կնքված սուլթան Կալաունի և Լեոն II-ի միջև, կարևոր է, քանի որ ցույց է տալիս հայ վաճառականների գոյությունը, որոնք գնում էին ղեպի սուլթանին պատկանող տարածքները և հակառակը՝ մահմեդական վաճառականների գոյությունը՝ Կիլիկիայում. այդ մահմեդական վաճառականներն այսպեղ լին պարունավորվում կամ անցնում էին այս տարածքով տանելով ուլիսիսի ապուանքներ, ինչպիսիք էին ստրուկները, ձիերը, չորիները։ Պայմանագրերը երաշխավորում է մեկ և մյուս կողմի անվտանգությունը, երթևեկությունը աղաատությունը, վախճանված վաճառականի ունեցվածքի վերադարձումը ալն երկրի իշխանություններին, որտեղից նա եղել է ծագումով, ինչպես նաև նավարկությունից հետո փրկված ունեցվածքի վերադարձումը։ Նույն այս պայմանագրում ընդգծվում է Կիլիկիայի հայկական թագավորության հանդիմանությունը դերը. հիշատակվում են նրա վրայով անցնող ճանապարհները, որ դալիս են բոլոր կողմերից (Արևելք, Պարսկաստան, Իրաք, Անատոլիա, Արևմուտք) և տանում են ղեպի մամուլների հոգերը³⁰։ Պարսից ծայր միջերկրածովյան նավահանգիստների հետ կապող այս առևտրական ուղիների մասին, որ արևմուտքից դալիս էին պարենավորվելու համեմունքներով և աբեկյան սպրանքներով, այլ վկայություններ կարելի է ղրտնել, օրինակ, Մարինո Սանտուտի մոտ, որը միմյանցից զանազանում է Բաղդադով անցնող մի ճանապարհ և Բալբրիով անցնող մեկ ուրիշը, որոնք լին՝ մեկը, թե՛ մյուսը տանում են ղեպի Ալաս³¹։ Բալբրիզի կարևորությունը երևում է ուսուս Մարկո Պոլոյի մոտ, որը հիշատակում է Հնդկաստանի և Բալբրիզի միջև եղած կապերը³², իսկ Պեդրոտտին նշում է այն ծախսերը, որ կատարվել են յուրաքանչյուր հանդրմանակետում մի վաճառականի կողմից, որը ցանկացել է ապրանքներ փոխադրել Ալասից Բալբրիզ՝ անցնելով Սեբաստիայով³³։ Մի արաբական տեքստից պարզվում է, որ 2000 մահմեդական վաճառականներ, ծաղումով մեծ մասամբ Բաղդադից, 1337 թ. ժամանակավորապես ապրել են Կիլիկիայում³⁴։ Ասիական մուլըցամաքի խորքի հետ կապը մի քանի արկածախնդիր խալաջի վաճառականների գործն է եղել, սակայն հավանաբար այսինի շատ հայ կամ մահմեդական վաճառականների, որոնց համար խթան էր հանդիսանում արևմտյան պահանջարկը, որը նրանք պալիս էին բավարարելու Ալասի շուկայում։

Այսպիսով, ակնհայտ է, որ կիլիկյան առևտուրը միջին դարերում կապված է եղել Ալասի նավահանգստի բարգաւաճման հետ, որ փոխանակվում էին արևմտյան և արևելյան սպրանքները՝ բամբակը, համեմունքները, մետաքսեղենը՝ մահմեդական և հայաղղիների դիմաց։ Չնայած դրան, մեր դիտելիքները տնտեսական երևույթների մասին կարող են միայն մասնակի լինել՝ առկա վաճառքի տնտեսական պատճառով։ Վերջիններս, բաղկացած լինելով համալրա բացառապես խալաջական աղբյուրներից, վեր են հանում միայն խալաջիների կողմից իրականացված առևտուրը։ Այդպիսով, ծովային առևտուրը հասակորեն ընդգծվում է ըստաքային առևտրի հա-

²⁹ Mas Latrie. Op. cit., II, pp. 74—79.

³⁰ Langlois. Op. cit., pp. 217—231; M. Canard. Le royaume d'Arménie-Gélie et les Mameluks jusqu'au traité de 1285.—REArm., IV (1967), pp. 217—259.

³¹ Marino Sanuto Torsello. Liber Secretorum fidelium crucis sup Terrae Sanctae recuperatione et conservatione, II, Hanau 1611, p. 23.

³² Marco Polo. Op. cit., I, pp. 81—82.

³³ Pegolotti. Op. cit., pp. 28—29.

³⁴ Հղվում է ըստ S. Labib. Op. cit., p. 67.

մեծատուրթյամբ, որը, սակայն, անհրաժեշտ էր շուկաները արևելյան համեմունքներով և ապրանքներով պարենավորելու համար: Հանգես են գալիս միայն մի քանի ժամանման վայրեր, ինչպիսիք են Սեբաստիան և Բավրիզը: Մինչև Ակրայի անկումը Այասը հանգես է գալիս որպես Միջերկրական ծովի արևելյան մասի այս տարածքի մյուս նավահանգիստներից մեկը, որտեղից արևմտյան վաճառականներն իրենք են իրականացնում առևտուրը մահմեդական երկրների հետ: Ընդհակառակը, 1291 թ. հետո, Այասը անբաժանելի է դառնում կիպրոսյան Ֆամագուստա նավահանգստից, որի հետ միասին կազմում է մեկ առևտրական տարածություն: Սակայն ի հակադրություն Ֆամագուստայի, Այասը չի կարողանում պահել իր դիրքերը և ենթարկվում է մամլուքների հարձակումներին, այդպիսով նշանավորելով Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական դերի և բարգավաճման վախճանը:

Յրաներենից քարգմանեց

Հ. Ն. ՄԿՐՏՅԱՆԸ

КИЛИКИЙСКАЯ ТОРГОВЛЯ В XII—XIV ВЕКАХ

КАТРИН ОТТЕН-ФРУ (Страсбург)

Р е з ю м е

В статье делается попытка воссоздать общую картину киликийской торговли XII—XIV веков путем привлечения средневековых источников—венецианских и генуэзских документов, относящихся к 1260—1318 гг.—(привилегии и грамоты, врученных итальянским купцам киликийскими властями, нотариальных актов, счетоводных книг венецианских и пизанских купцов и т. д.), а также сопоставления исследований (особенно новейших) в области истории Киликии. В политико-экономическом контексте упомянутого периода рассматриваются основные торговые пути (сухопутные и морские), которые связывали Киликийскую Армению со странами Запада и Востока, главные порты и города, являвшиеся торговыми центрами, общины иноземных купцов, обосновавшихся на киликийской земле, виды ввозимых и вывозимых товаров и т. п., прослеживаются периоды расцвета и упадка киликийской торговли.

THE CILICIAN COMMERCE IN THE XII—XIV CENTURIES

CATHERINE OTTEN-FROUX (Strasbourg)

S u m m a r y

The present article is an attempt to reconstruct the common picture of the Cilician commerce in the XII—XIV centuries through the examination of the medieval sources (privileges and official documents, offered to the Italian merchants by the Cilician authorities, Venetian and Genoese documents dating from 1260—1318: notarial deeds, account books of the Venetian and Pisan merchants etc.), as well as the confrontation of the studies (especially of the latest ones) in the field of the Cilician history. In the political-economic context of the mentioned period the main trade-routes connecting Cilician Armenia to the countries of the West and the East, the principal trading centres of the Cilician Kingdom, the communities of the foreign merchants settled on the Cilician land, etc. are examined, the periods of the flourishing and the decline of the Cilician commerce are traced.